

զպատասխանն՝ զոր ահա բնկայցիս զայս՝ համարեալ
 եւ զիս երկրորդ մահտեսի Մուրատ եւ յերկուց
 միակ զիր։ Բազում կարօտ ի նմանէ, որպէս եւ
 յինէն, մեծաւ սիրով համբոյր, եւ խնդիր ազօթից
 եւ մշտնջենաւոր եկաւորութեան գրոյդ բաղձանս
 եւ խնդիր, զոր եւ ես երկրորդեմ. ազօթէ առ
 լստուած վասն հանդարտութեան քոյ, զոր եւ ես ոչ
 մոռանամ. փափաքումն անդրէն տեսութեան քոյ,
 որ յինէն նոյնպէս. յաւ կսկծանաց վասն բաժանման
 առ ի քէն, որում մեծապէս կցորդիմ. միշտ յիշա-
 տակ քո ի բերան իւր, յոր զանցանեմ քան զնա։
 Լրդ զորս ողջունեալ ես ի գրիդ որ առ նա,
 ամենեքեան բազում սիրով համբոյր աջոյդ նուիրեն.
 բայց զերկուս անուանս մուացեալ ես գրել նոցա
 ողջոյն, այսինքն՝ պարոն Սէֆէրին եւ խօճայ
 Էօրկիին, նոքա եւս զսուրբ աջդ ցանկան համբուրել.
 ամենեքեան բնտանիք քո ողջ եւ առողջ են.
 մանկունք եղբօր քոյ ի զարգացումն են, եւ օրհնու-
 թեանդ կարօտին. բոլոր բարեկամքդ հանդարտ
 են՝ որպէս տեսեալդ էիր. Սէվի սնտուկն քո տուի
 եղբօր քոյ, զմխիթարութեան բան ոչ անխայեմ
 ի նմանէ, եւ խիտ առ խիտ գնամ ի խանութն
 միշտ։ Սակայն խնդրեմ ի քէն, զի ահա յորոց
 առ. Հայր Վարդապետն գիր առաքեցաւ, եւ վասն
 որոց խնդիր եղեւ կամ յատուկ գիր եւ կամ յա-
 տուկ ողջոյն արիութեամբ վճարել տացես զհա-
 մայնն ի ստացումն բարեաց համբաւոյ մշտնջենա-
 ւորութեան եւ ի բորբոքումն սիրոյ սիրահարեւոյ,
 եւ մի ցրտութեամբ մուացութեան կամ քի-
 նախնդրութեան զշիջումն համբուրել. եւ յամենայն
 գիրս՝ որ ի բերանոյ հայր վարդապետին, զյատուկ
 ձեռին իւրոյ ստորագրութիւնն գնել տացես. եւ
 այս բաղմութիւն ի ձէնջ առաքելի զրեանց հար-
 կաւոր լինեն յառաջնում նուագիս է, եւ ոչ միշտ,
 զի ապա ի կամս ձեր է։ Մի ինչ քամահանաց եւ
 վրէժխնդրութեան բանս գրել ձեռն արկանիցէք